Աշխատանքի ծածկագիր 88789

ՈՐՈՇՈՒՄ

ք. Երևան

17.12.2024թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
Նախագահությամբ՝ Ալեքսանդրա Հարությունյանի
Մասնակցությամբ անդամներ՝
Անի Հարությունյանի
Քրիստինե Ալեքսանյանի

քննության առնելով վարչական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը.

ՊԱՐԶԵՑ

Բողոքարկվել են տարբերակ 4-ի դատավարական իրավունք բաժնի 9-րդ և 25-րդ հարցերը:

Հարց 9

Բողոքարկման արդյունքում գնահատականը թողնվել է անփոփոխ, քանի որ խնդիրը վերաբերում էր Ա. Կարապետյանի կողմից վարչարարությամբ պատճառված վնասի հատուցմանը և ոչ դատական ծախսերի փոխհատուցմանը, իսկ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման հետ կապված վեճերը բոլոր դեպքերում ենթակա են քննության վարչական դատարանում: Համանման դիրքորոշում է հայտնել նաև Վճռաբեկ դատարանը 25.04.2017 թվականի թիվ ՎԴ/0528/05/16 վարչական գործով կայացրած որոշմամբ:

Հարց 25

Բողոքարկման արդյունքում գնահատականը թողնվել է անփոփոխ, քանի որ առաջադրանքի թեստային պատասխաններից Հավակնորդը պետք է ընտրեր այն միակը, որն առավել համակողմանիորեն և սպառիչ կերպով բովանդակում էր խնդրի ճիշտ լուծումը: Ներկայացված խնդրում դա 4-րդ տարբերակն է:

ՈՐՈՇԵՑ

Թիվ 88789 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը ամբողջովին մերժել: Վարչական դատավարության բաժնի ընդհանուր միավորը թողնել անփոփոխ:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ք. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ